

տեղեկութեանց վրայ հիմնելով աւելի հաստատ համոզմամբ կը ներկայա-  
ցընէ . հայ երկիրը մուտ դասած գաղթականութեանց նկատմամբ ընդհա-  
նուր ըմբռնումն՝ որով անոնց հայ տարրն ամբողջովին տեղափոխած ըլ-  
լալը բացարձակապէս կը մերժէ . վերջապէս , խուզարկու ոգւոյն լծոր-  
դուած ողջամիտ զգուշաորութիւնն՝ որով առաջադրած խնդիրները քըն-  
նութեան բովէն կանցընէ . ասոնց ամենը կը ցուցընեն թէ Ուրուագիծն՝  
իր համեստ ձեւովը՝ շնորհակալութեան արժանի օգտակար աշխատութիւն  
մ'է որ ազգային պատմութեան վերաբերող տեղեկութեանց մէջ կարեւոր  
տեղ մը կը դրուէ : Ուրուագիծին պարունակած այնքան հմտութենէն  
զատելով կը հաւատանք թէ իմաստուն Բանասէրին սկսնակ մակդիրն  
ամեն ոք նմանօրինակ ապագայ աշխատութեանց սկիզբ իմաստով կըն-  
դունի եւ անուղղակի խոստում մը՝ Ուրուագիծովը զարթուցած հետաքըր-  
քութիւնը նոյն կարգի նորանոր գրութիւններով յաղեցընելու : Վստահ  
ենք թէ բոլոր ուսումնասէր ընթերցողներուն միտքն արտայայտած կըլ-  
լանք՝ այս ակնկալութեան անյապաղ կատարումը փափաքելով :

Ա. Թ. Տ.



Տ Ե Ս Թ Լ

Բարձունքի վրայ , կանաչ խոտերում ,

Մտազբաղ նստած իրիկնաղէմին ,

Աչքերս լարած նայում եմ հեռու ,

Հարցնում եմ . — Ի՞նչ է մեր բաղդը վերջին :

Երկա՛ր սպասում եմ , ականջ եմ դնում ,

— « Անդո՛ւթ երկինք , դու է՞լ ես լուի » :

Չը կայ պատասխան : Սպասում եմ սրտում .

Կարծես ամենքն էլ մեզ են մոռացել :

Եւ այս ցնորքներից , մտածմունքներից ,

Հոգիս ու մարմինս ծանրացած վշտով՝

Ես վայր եմ ընկնում : Անթի՛ւ տեսիլներ

Տեսնում եմ շարքով , ինչ զգում անվրդով :

Եւ ես հրճուանքից ոգեւորում եմ ,

Ուզում եմ անվերջ դեռ երկար հրճուել ,

Յանկարծ ես նորից զգաստանում եմ ,

Ափսոս զգում եմ — Տեսիլ եմ տեսել :

Օգոստոս 11-1903 թ.

ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿ